

**«Հայաստանի Հանրապետությունում ԱՏԳ ԱԱ 2204, 2205, 2206 00, 2207 և 2208 ծածկագրերին դասվող ապրանքների՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում նույնականացման միջոցներով դրոշմավորման կանոնները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ**

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

\_\_\_\_\_ 2023 թվականի N \_\_\_\_-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՏԳ ԱԱ 2204, 2205, 2206 00, 2207 ԵՎ 2208 ԾԱԾԿԱԳՐԵՐԻՆ ԴԱՍՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ՝ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով 2018 թվականի փետրվարի 2-ի «Եվրասիական տնտեսական միությունում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման մասին» համաձայնագիրը և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 396.1-ին հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետությունում 2023 թվականի հուլիսի 1-ից Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 389-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ԱՏԳ ԱԱ 2204, 2205, 2206 00, 2207 և 2208 ծածկագրերին դասվող՝ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորումն իրականացվում է համաձայն Եվրասիական տնտեսական խորհրդի կողմից 2021 թվականի մարտի 5-ին հաստատված՝ Եվրասիական տնտեսական միությունում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման համակարգի հիմնական տեխնոլոգիական կազմակերպչական մոդելի (այսուհետ՝ հիմնական մոդել):
2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի

- 389-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ԱՏԳ ԱԱ 2204, 2205, 2206 00, 2207 և 2208 ծածկագրերին դասվող ապրանքների՝ հարկային մարմնի կողմից տրամադրված (տրամադրվող) ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի N773-Ն որոշման համաձայն: Սույն կետին համապատասխան դրոշմավորված ապրանքները կարող են չդրոշմավորվել հիմնական մոդելի համաձայն:
3. Սահմանել Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 389-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ԱՏԳ ԱԱ 2204, 2205, 2206 00, 2207 և 2208 ծածկագրերին դասվող ապրանքների՝ հիմնական մոդելի համաձայն դրոշմավորման կանոնները՝ համաձայն N1 հավելվածի:
  4. Սահմանել ալկոհոլային արտադրանքի (ԱՏԳ ԱԱ 2204, 2205, 2206 00, 2207 և 2208 ծածկագրերին դասվող ապրանքների) գրանցման ժամանակ լրացվող տեղեկատվության ձեվաչափը, կազմը և կառուցվածքը, ինչպես նաև այդ տեղեկությունների փոխանցման ժամկետները՝ համաձայն N 2 հավելվածի:
  5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

## **Հավելված N1**

### **ՀՀ կառավարության 2023 թվականի**

\_\_\_\_\_ -ի N \_\_\_\_ -Ն որոշման

## **ԿԱՆՈՆՆԵՐ**

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐԷԻ 389-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԱՏԳ ԱԱ 2204, 2205, 2206 00, 2207 ԵՎ 2208 ԾԱԾԿԱԳՐԵՐԻՆ ԴԱՍՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ՝ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈԴԵԼԻ ՀԱՄԱԶԱՅՆ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ**

1. Սույն կանոններով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 389-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ԱՏԳ ԱԱ 2204, 2205, 2206 00, 2207 և 2208 ծածկագրերին դասվող ապրանքների (այսուհետ՝ ալկոհոլային արտադրանք)՝ Եվրասիական տնտեսական խորհրդի կողմից 2021 թվականի մարտի 5-ին հաստատված Եվրասիական տնտեսական միությունում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման համակարգի հիմնական տեխնոլոգիական կազմակերպչական մոդելի (այսուհետ՝ հիմնական մոդել) համաձայն

դրոշմավորման հետ կապված հարաբերությունները: Ընդ որում՝

1) ԱՏԳ ԱԱ 2207 ծածկագրին դասվող՝ Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և Հայաստանի Հանրապետություն ներմուծվող էթիլային սպիրտի վրա նույնականացման միջոցների առկայությունը պարտադիր է, եթե այդ ապրանքներն արտադրողի կամ ներմուծողի կամ այլ կերպ տարայավորողի կողմից տարայավորված են մինչև 5 լիտր տարողությամբ տարաներով,

2) ԱՏԳ ԱԱ 2204, 2205, 2206 00, 2208 ծածկագրերին դասվող՝ մինչև 0.05 լիտր տարողությամբ տարաներով տարայավորված խմիչքները, ինչպես նաև ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դասվող՝ մինչև 9 տոկոս ներառյալ սպիրտայնություն ունեցող սպիրտային խմիչքները ենթակա չեն նույնականացման միջոցներով դրոշմավորման:

2. Ալկոհոլային արտադրանքի անհատական (սպառողական) փաթեթավորման թվային նույնականացման միջոցը ներառում է դրոշմավորման ծածկագիր՝ բաղկացած տվյալների 3 խմբից, որոնցից առաջինն ու երկրորդը ձևավորում են ալկոհոլային արտադրանքի անհատական (սպառողական) փաթեթավորման նույնականացման ծածկագիրը, իսկ երրորդ խումբը՝ ստուգման ծածկագիրը: Ընդ որում՝

1) առաջին խումբը բաղկացած է 14 նիշից (14 նիշանոց ապրանքի կոդ (GTIN կամ այլ եզակի կոդ, որը գեներացվել է EAN-13 ստանդարտին համապատասխան)) և ներառում է ապրանքի ծածկագիրը, որին նախորդում է կիրառման նույնացուցիչը (01), որը գեներացվում է օպերատորի կողմից՝ հիմնվելով տնտեսվարողի՝ ալկոհոլային արտադրանքի վերաբերյալ տրամադրած տեղեկատվության վրա,

2) երկրորդ խումբը բաղկացած է 7 նիշից (թվեր, լատինատառ այբուբենի մեծատառեր ու փոքրատառեր, ինչպես նաև հատուկ նիշեր (!" % & ' ( ) \* + , - . / \_ : ; = < > ?)) և ներառում է ալկոհոլային արտադրանքի անհատական (սպառողական) փաթեթավորման անհատական սերիական համարը, որին նախորդում է կիրառման նույնացուցիչը (21), որը գեներացվում է օպերատորի կամ տնտեսվարողի կողմից (տվյալների այս խմբի եզրափակիչ նիշը հանդիսանում է նիշ-բաժանարարը, որն ունի «29» ծածկագիրը ASCII նիշերի աղյուսակում),

3) երրորդ խումբը բաղկացած է 4 նիշից (թվեր, լատինատառ այբուբենի մեծատառեր ու փոքրատառեր, ինչպես նաև հատուկ նիշեր (!" % & ' ( ) \* + , - . / \_ : ; = < > ?)) և ներառում է ստուգման ծածկագիրը, որին նախորդում է կիրառման նույնացուցիչը (93) և որը գեներացվում է օպերատորի կողմից:

3. Ալկոհոլային արտադրանքի անհատական (սպառողական) փաթեթավորման նույնականացման միջոցները տրամադրվում են երկչափ շտրիխ ծածկագրի տեսքով՝ GS1 DataMatrix ձևաչափով:

4. Ալկոհոլային արտադրանքի խմբային փաթեթավորման նույնականացման միջոցը ներառում է դրոշմավորման ծածկագիր, որն իր մեջ ներառում է տվյալների 3 խումբ, որոնցից առաջինն ու երկրորդը ձևավորում են ալկոհոլային արտադրանքի խմբային փաթեթավորման նույնականացման

ծածկագիրը, իսկ երրորդ խումբը՝ ստուգման ծածկագիրը, ընդ որում՝

1) առաջին խումբը բաղկացած է 14 նիշից (14 նիշանոց ապրանքի կոդ (GTIN կամ այլ եզակի կոդ, որը գեներացվել է EAN-13 ստանդարտին համապատասխան)) և ներառում է ապրանքի ծածկագիրը, որին նախորդում է կիրառման նույնացուցիչը (01), որը գեներացվում է օպերատորի կողմից՝ հիմնվելով ավտոմատացված արտադրանքի շրջանառության մասնակցի տրամադրած տեղեկատվության վրա,

2) երկրորդ խումբը բաղկացած է 13 նիշից (թվեր, լատինատառ այբուբենի մեծատառեր ու փոքրատառեր, ինչպես նաև հատուկ նիշեր (!"%&'()\*+,-./\_:=<>?)) և ներառում է ավտոմատացված արտադրանքի խմբային փաթեթավորման անհատական սերիական համարը, որին նախորդում է կիրառման նույնացուցիչը (21), որը գեներացվում է օպերատորի կամ տնտեսվարողի կողմից (տվյալների այս խմբի եզրափակիչ նիշը հանդիսանում է նիշ-բաժանարարը, որն ունի «29» ծածկագիրը ASCII նիշերի աղյուսակում),

3) երրորդ խումբը բաղկացած է 4 նիշից (թվեր, լատինատառ այբուբենի մեծատառեր ու փոքրատառեր, ինչպես նաև հատուկ նիշեր (!"%&'()\*+,-./\_:=<>?)) և ներառում է ստուգման ծածկագիրը, որին նախորդում է կիրառման նույնացուցիչը (93) և որը գեներացվում է օպերատորի կողմից:

5. Ավտոմատացված արտադրանքի խմբային փաթեթավորման նույնականացման միջոցները տրամադրվում են GS1 DataMatrix երկչափ շտրիխ ծածկագրի ձևաչափով:

6. Նույնականացման միջոցը փակցվում է անհատական (սպառողական) փաթեթավորման և (կամ) խմբային փաթեթավորման և (կամ) պիտակի և (կամ) կաչուն պիտակի վրա այնպիսի մեթոդով, որը թույլ չի տալիս նույնականացման միջոցն առանձնացնել ավտոմատացված արտադրանքի փաթեթավորումից:

7. Անհատական (սպառողական) փաթեթավորման վրա նույնականացման միջոցը փակցվում է ոչ պակաս, քան 14x14 միլիմետր չափով, այն կարող է փակցվել փաթեթավորման ցանկացած հատվածի վրա, բացառությամբ ստորին հատվածի:

8. Խմբային և տրանսպորտային փաթեթավորման վրա նույնականացման միջոցը փակցվում է փաթեթավորման դիմային կամ կողային հատվածի վրա և պետք է ունենա այնպիսի չափս, որ ապահովի ագրեգացման ընթացակարգերի կատարման հարմարավետությունը:

9. Անհատական (սպառողական) փաթեթավորման և (կամ) խմբային փաթեթավորման և (կամ) պիտակի և (կամ) կաչուն պիտակի վրա փակցվող նույնականացման միջոցը չպետք է տպագրվի փաթեթավորման թափանցիկ թաղանթի վրա կամ մեկ այլ արտաքին փաթեթավորման նյութի վրա: Պիտակի վրա չպետք է լինի մեկ այլ տեղեկատվություն, որը կխոչընդոտի նույնականացման միջոցի ընթերցմանը:

Նույնականացման միջոցը պետք է տեղադրվի այնպես, որ չխախտվի

ավլոհոլային արտադրանքի փաթեթավորման վրա տպված տեղեկատվության ամբողջականությունը տեխնիկական կանոնակարգման ոլորտի նորմատիվային փաստաթղթերի պահանջների համաձայն:

10. Ավլոհոլային արտադրանքի վրա պիտակների և (կամ) կաչուն պիտակների կիրառման համար ներկայացվում են հետևյալ պահանջները.

1) ավլոհոլային արտադրանքի վրա պիտակներ և (կամ) կաչուն պիտակներ փակցնելու համար պետք է կիրառվի այնպիսի տեխնոլոգիա, որը կապահովի պիտակի վրա տպված նույնականացման միջոցների ընթերցումը պիտակի կիրառման պահից մինչև ավլոհոլային արտադրանքը սպառողին վաճառելու պահը,

2) պիտակները և (կամ) կաչուն պիտակները փակցվում են անմիջապես ավլոհոլային արտադրանքի փաթեթավորման վրա՝ սոսնձման եղանակով,

3) չի թույլատրվում պիտակի և (կամ) կաչուն պիտակի վրա ավլոհոլային արտադրանքի փաթեթավորման որևէ այլ տարրեր փակցնել, որոնք ծածկում են պիտակի և (կամ) կաչուն պիտակի մակերեսը և դժվարացնում են նույնականացման միջոցի ընթերցումը,

4) նույնականացման միջոցների չափը և տեղակայումը պետք է ապահովի դրոշմավորման ծածկագրերի ճիշտ ընթերցումն ու ճանաչումը, ներառյալ տվյալների հավաքագրման տերմինալների, հատուկ (բջջային) հավելվածների, լազերային տեսաձրիչների միջոցով՝ ISO/IEC 15415 ստանդարտի (ISO/IEC 15415:2011 «Տեղեկատվական տեխնոլոգիա. ավտոմատացված նույնականացման և տվյալների հավաքագրման տեխնիկաներ՝ շտրիխ ծածկագրի տպման որակի թեստավորման տեխնիկական հատկորոշիչը՝ երկչափ նիշեր») համաձայն:

11. ԱՏԳ ԱԱ 2204, 2205, 2206 00, 2207 և 2208 ծածկագրերին դասվող ապրանքների արտադրանքի փաթեթավորման տարբեր ձևերից, նյութերի գործոններից, արտադրանքի արտադրական ցիկլից, ինչպես նաև արտադրության սերիականությունից ելնելով՝ հնարավոր են ապրանքների/փաթեթների դրոշմավորման հետևյալ տարբերակները՝

1) ծածկագրերի տպագրում տպարանում, որտեղ շրջանառության մասնակիցը պատվիրում է փաթեթավորում (այսինքն փաթեթավորման վրա նույնականացման միջոցների կիրառումը կատարվում է ծառայություն մատուցողների կողմից ապրանքների շրջանառության մասնակցի պատվերով),

2) պիտակավորում (արտադրանքի վրա պիտակների սոսնձում),

3) նույնականացման միջոցների անմիջական կիրառում արտադրանքի փաթեթավորման վրա գործարանում հոսքագծի վրա:

12. Ավլոհոլային արտադրանք արտադրողը պատվիրում է դրոշմավորման ծածկագրեր համակարգում, փոխանցում է դրոշմավորման ծածկագրերը տպարան և պատվիրում է փաթեթավորման արտադրություն արդեն փակցված նույնականացման միջոցներով, այնուհետև ստանում է արդեն դրոշմավորված

փաթեթավորումը: Պիտակավորման այս մեթոդն օգտագործելիս ավտոմատաբար արտադրանքի շրջանառության մասնակիցը պետք է ձեռք բերի 2d տեսածրիչ կամ տվյալների հավաքագրման տերմինալ (S<S)՝ դրոշմավորված արտադրանքի հետ աշխատելու համար: Միաժամանակ, այս դեպքում տպարանը պետք է հագեցած լինի դրոշմավորման ծածկագրերով աշխատելու համար անհրաժեշտ բոլոր սարքավորումներով (ծրագրային ապահովում՝ դրոշմավորման ծածկագիր ստանալու և փոխակերպելու նույնականացման միջոցների տպագրման և ստուգման սարքավորումներ):

13. Ապրանքների փաթեթավորման վրա պիտակների սոսնձումը կարող է իրականացվել ապրանքների շրջանառության մասնակցի կողմից ձեռքով կամ պիտակի կիրառիչի միջոցով: Առաջին դեպքում պիտակները տպվում են ջերմային փոխանցման տպիչի վրա, այնուհետև կազմակերպության աշխատակիցները փակցնում են դրանք ապրանքների վրա: Երկրորդ դեպքում տեղադրվում է պիտակի կիրառիչ, որը նախ նույնականացման միջոցը փակցնում է կաչուն պիտակի վրա, իսկ հետո կաչուն պիտակը սոսնձում է ապրանքի վրա: Դրոշմավորման այս մեթոդը կիրառելիս շրջանառության մասնակցին անհրաժեշտ կլինի սարքավորումների և նյութերի հետևյալ նվազագույն հավաքածուն՝

- 1) անհատական կամ դյուրակիր համակարգիչ,
- 2) պիտակի տպիչ,
- 3) ինքնասոսնձվող պիտակներ,
- 4) ջերմափոխանցող ժապավեններ:

14. Արտադրողը կարող է ինքնուրույն փակցնել նույնականացման միջոցները ավտոմատաբար արտադրանքի վրա, որոնք պարունակում են համակարգում ստացված դրոշմավորման ծածկագրեր: Միաժամանակ, վերջինս պետք է ձեռք բերի մասնագիտացված սարքավորումներ կամ հարմարեցնի գոյություն ունեցող սարքավորումները և կարգավորի իր բիզնես գործընթացները դրոշմավորման և հետազօծելիության գործընթացների հետ աշխատելու համար:

**Հավելված N2**

**ՀՀ կառավարության 2023 թվականի**

\_\_\_\_\_ -ի N \_\_\_\_ -Ն որոշման

**ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ (ԱՏԳ ԱՎ 2204, 2205, 2206 00, 2207 ԵՎ 2208  
ՇԱԾԿԱԳՐԵՐԻՆ ԴԱՍԿՈՂ ԱԴՐԱՆՔՆԵՐԻ) ԳՐԱՆՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԼՐԱՑՎՈՂ  
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՉԱՓՈՒՄ, ԿԱԶՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ\***

## Ապրանքաշրջանառության մասնակցի տվյալները

NN	Դաշտի անվանումը	Պարտադիր դաշտը	Նկարագրությունը
1.	Կարճ անվանում	Այո	Կազմակերպության անվանում
2.	Ամբողջական անվանում	Այո	Կազմակերպության ամբողջական անվանում
3.	Կազմակերպչական	Այո	
4.	իրավական ձև Հարկ վճարողի հաշվառման	Այո	
5.	համարը (ՀՎՀՀ) Իրավաբանական հասցե	Ոչ	
6.	Գործունեության հասցե	Այո	
7.	Կոնտակտային անձ	Այո	
8.	Հանրային ծառայությունների	Այո	
9.	համարանիշ (ՀԾՀ) Էլ. հասցե	Այո	
10.	Հեռախոսահամար	Այո	
12.	Ապրանքախումբ	Այո	
13.	Մասնակցի տեսակ	Այո	
14.	Լիցենզիայի վերաբերյալ	Ոչ	
	տեղեկություններ		

## Ապրանքի նկարագրություն

NN	Դաշտի անվանումը	Պարտադիր դաշտը	Նկարագրությունը
			Նկարագրությունը GTIN (Global Trade Համաշխարհային ապրանքի համար GS1 միջազգային

1.	GTIN	Այո	կազմակերպության ԱՏԳ ԱԱ - Արտաքին
2.	ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Այո	տնտեսական գործ ապրանքային ան (ԵԱՏՄ)
3.	Փաթեթավորման տեսակ	Այո	Անհատական (սպ կամ խմբային

### Անհատական (սպառողական) փաթեթավորման դեպքում

NN	Դաշտի անվանումը	Պարտադիր դաշտը	Մեկնաբանություն
3.			
4.	Ապրանքի անվանումը	Այո	
5.	Ապրանքային նշանի  անվանումը	Ոչ	
6.	Ծագման երկիրը	Այո	
7.	Ապրանքների ծավալը անհատական (սպառողական) փաթեթավորման մեջ	Այո	
8.	Արտադրության ծավալի չափման միավոր	Այո	
9.	Արտադրողի անվանում	Այո	
10.	Արտադրող ընկերության պրեֆիքսը	Պարտադիր է՝ տեղական արտադրանքի համար, ոչ պարտադիր՝ ներմուծվող ապրանքի	GS1 կազմակերպություն տրամադրված պր ապրանքի
11.	Ալկոհոլային ապրանքների կատեգորիա	դեպքում Այո	
12.	Ալկոհոլային արտադրանքի տեսակ	Այո	
13.	Էթիլային սպիրտի ծավալային բաժին, % ծավալով	Այո	
14.	Շաքարների զանգվածային	Ոչ	



խտություն, գ/դմ3 (գրամ մեկ  
խորանարդ դեցիմետրի համար)

15.	Թորվածքների հնեցման ժամկետ, տարիներ	Ոչ	
16.	Արտադրության մեթոդ	Ոչ	
17.	Փաթեթավորման տեսակ	Ոչ	
18.	Փաթեթավորման նյութ	Ոչ	
19.	Համապատասխանության փաստաթղթերի մասին  Տեղեկատվություն	Այո	
20.	Արտադրանքի պատկերը	Այո	Հնարավոր է ավելի լուսանկար png ֆորմատով

### Խմբային փաթեթավորման դեպքում

NN	Դաշտի անվանումը	Պարտադիր դաշտը	Մեկնաբանություն
1.	Ապրանքի անվանումը Փաթեթավորված	Ոչ	
2.	սպառողական ապրանքի GTIN	Այո	
3.	Ապրանքի քանակը փաթեթում	Այո	
4.	Արտադրանքի պատկերը	Ոչ	Հնարավոր է ավելի լուսանկար png ֆորմատով

\* Ապրանքաշրջանառության մասնակիցը դրոշմավորման ծածկագիր ստանալու նպատակով մինչև դրոշմավորման ծածկագիր ստանալու հայտի ներկայացումը սույն հավելվածով նախատեսված տեղեկատվությունը

Էլեկտրոնային եղանակով ներկայացնում է օպերատորին: